


ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԻՐ

Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ



Նախընթաց տարիներու մամ, Մայիս եւ Յունիս ամիսներու ընթացքին կատարուեցան դպրոցական տարեկանի շրջանին յատուկ եամգիտութիւնները, որոնց ամփոփ նկարագրականները կու տանք ստորեւ:

Մ Ա Ր Զ Ա Հ Ա Ն Դ Ե Ս

Տեղի ունեցաւ 9 Մայիս 1971. Կիրակի կէսօրէ կտք ժամը 4ին, Ժառանգաւորաց վարժարանի Մարդագալտին վրոյ, ի ներկայութեան վարժարանի Հողչ. Տեսչին, Միտան Հայրերու, ծնողներու եւ Հանդիսականներու պատկանելի բազմութեան:

Մանչերու երկրամեայ մարդիչ Պր. Միտաք Յակոբեան եւ աղջկանց մարդիչ Օր. Անի Մանուկեան ջանք չէին խնայած դաշտահանդէսը բնծայելու Հետաքրքրական եւ արդիւնաւոր: Տղաք եւ աղջիկներ, իւրաքանչիւրը երկուքական խումբերու բաժնուած, լաւազոյն ցուցաբերեցին տարուան մը մարդակալան ճիւղերուն արդիւնքը՝ վազքի, մարդակալի, դրօշալաւի, պարանաձողութեան եւ մարդական այլ խաղերու կատարումով:

Հանդէսի աւարտին, մանչերու Հաւասար արդիւնք յուշաբերած զոյգ խմբապետներ եւ աղջկանց յաղթող խումբի խմբապետուհին ստացան բաժանները, իսկ մարդակալան այլ ճիւղերու մէջ ուղարկու յաղողութիւն արձանադրած մարդիկներ՝ բաժաններ Տեւտոյ Հողչ. Հայր Կիրակոսին, ինչպէս նաեւ հանդէսին հիւրարար ներկայ դասուող Յուշայց Պարտիաքաբարանի եպիսկոպոսներէն Գերշ. Տ. Արթեմիոս Սրբադանէն:

Հանգչեալ տեւեց մօտ երկու ժամ:

ՄԱՆԿԱՊՈՐՏԵՑԻ ԲԱԺՆԻ

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ

Տեղի ունեցաւ Կիրակի, 30 Մայիս, կէսօրէ կտք ժամը 4ին, Հայ Երիտասարդաց

Միութեան ակումբին մէջ, Նախագահութեամբ Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեանի եւ ի ներկայութեան Հողչ. շրջանի Հայրերի եւ ծնողներէ ու Հանդիսականներէ բաղկացած յոգնախումբ բազմութեան:

Մօտ երկու ժամ, Մանկապարտէզի փոքրիկները իրենց երգերով ու արտասանութիւններով, Հայկական պարերով ու մանկական արամախօսութիւններով հաճութիւն եւ զոհոհանկութեան զգացք պարգեւեցին ներկաներուն: Այս բոլորը ի հանդէս կը բերէին ինք ամիսներու այն դուրսդուրած ճիւղերը՝ զորս ի զործ գրած էին Մանկապարտէզի բաժնի ժողովուրդահանգչուհիները, ժողովուրդ մանուկներու կրթութեան ի խնդիր, իրենց առաջնորդ ունենալով 55 տարիներու պատակ ունեցող Մանկապարտիզպանուհի Օր. Տիգրանուհի Նալպանտեանը:

Հանդէսի աւարտին խօսք առաւ Տեսուչ Հողչ. Տ. Կիրակ Ս. Վրդ. Գաբրիէանը, որմէ կտք Գերշ. Տ. Շահէ Եպիսկոպոս 21 ընթացաւարտներուն բաժնեց վկայականներ:

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱԺՆԻ

1970-1971 դպրոցական տարեւոյնը փակող այս հանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, 6 Յունիս 1971, երեկոյան ժամը 6:30ին, Ս. Թ. Վարժարանի Գ. Կիւլպէնկեան վերնահարկին մէջ: Հանդէսին կը նախագահէր Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Հայրէ՛լ Արք. Աւանեսեան: Հրաւիրեալներու ընտրեալ բաղմութեան մը ժամանակէն առաջ արդէն փութացած էր լեցնել սրահը:

«Նմանեալ Մոմիսիսի» շարականով հանդէսին բացումը կատարուելէ կտք դործադրուեցաւ խնամալ յայտադիր մը, բաղկացած ընթացաւարտ սաններու կողմէ կատարուած ատենախօսութիւններէ՝ մեր երախտաշատ Հայրապետներէն Ներսէս Առտարա-

կեցի ծննդեան 200ամեակին եւ Մկրտիչ Քրիստոսի ծննդեան 150ամեակին նուիրուած, ինչպէս նաեւ երրորդ ատենախօսութիւն մը՝ մեր վերածաղկեալ Հայրենիքի յիսնամեակի նիւթին շուրջ, եւ խմբերդներէ՝ Վարժարանի երգչախումբին կողմէ երգուած՝ ղեկավարութեամբ Պր. Նազարէթ Հէքիմեանի: Կատարուեցաւ նաեւ խմբական արտասանութիւն մը՝ Գեղամ Սարեանի ստեղծագործութիւններէն:

Հանդէսի երկրորդ մասին՝ հանդիսականները ունեկըրեցին Վարժարանի միամասյ դործունէութեան տեղեկագիրը, իր ընդհանուր գիծերուն մէջ (որ կ'երեւի ամբողջութեամբ Աիքնի պապ թիւին մէջ), որմէ ետք Սրբազանը կատարեց բաշխումը չըբջանաւարտ սան-սանուհիներու պւարտական վկայականներուն եւ ուսման դանազան ճիւղերու, ինչպէս նաեւ վարքի եւ ձեռագործի բաժիններուն մէջ քաւագոյն արդիւնք ի յայտ բերած աշակերտներու մրցանակ-գիր-

քերուն: Շրջանաւարտ սանուհիներէն մէկուն կողմէ արտասանուած հրատեչտի յուզիչ ռաղբերմէն ետք երգչախումբը երգեց հրատեչտի երգը: Հուսկ ապա խօսք առաւ Լուսարարապետ Գերշ. Սրբազանը, որ զոհունակութեամբ արտայայտուելէ ետք ձեռք բերուած այս զեղեցիկ արդիւնքին համար, գովեստով արտայայտուեցաւ կըրթական այս գործին մղիչ ուժը հանդիսացող Վարժարանի բազմամեայ Տեսուչ Հոգչ. Յ. Կիւրեղ Մ. Վարդապետին մասին, ընթացաւարտներուն ուղղած յորդորական եւ պատշաճ խօսքերով շնորհատեց ու օրհնեց բոլորը, քանի որ զգրեթէ բոլորը ալ այս յարկէն ելած էք եւ չըբջանաւարտներ կարելի է կոչել ձեզ բոլորդ եղբաւականց Սրբազանը ժպտաղէմ:

Տէրունական աղօթքով եւ Ս. Աթոռոյ օրհներգով վերջ գտաւ աւելի քան երկու ժամ տևող այս հանդէսը: